ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2026 թվականի N 3060-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2729-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 28-ի «Քաղաքացիներ Նելլի Ալեքսանի Սիմոնյանին, Ռազմիկ Գրիշայի Սիմոնյանին, Գոհար Ընձակի Սիմոնյանին և Վահե Ռազմիկի Սիմոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 10գ հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 69,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը, ինքնակամ բացված 1 պատուհանն օրինական ճանաչելու մասին» N 2729-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 28-ի «Քաղաքացիներ Նելլի Ալեքսանի Սիմոնյանին, Ռազմիկ Գրիշայի Սիմոնյանին, Գոհար Ընձակի Սիմոնյանին և Վահե Ռազմիկի Սիմոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 10գ հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 69,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը, ինքնակամ բացված 1 պատուհանն օրինական ճանաչելու մասին» N 2729-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Նախաբանում և որոշման 1-ին կետում «69,6 (վաթսունինն ամբողջ վեց տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «69,9 (վաթսունինն ամբողջ ինը տասնորդական)» թվով և բառերով,
   2) Որոշման 1-ին կետում «192385 (մեկ հարյուր իննսուներկու հազար երեք հարյուր ութսունհինգ)» թիվը և բառերը փոխարինել «193203 (մեկ հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր երեք)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի